ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, p. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 17-Ա

ՖՈԿՇԱՆ ԵՎ ԲԵՐԴ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՏԵՂ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2012 թվականի հոկտեմբերի 24-ից 30-ն ընկած ժամանակահատվածում Բերդի քաղաքապետը փոխադարձ այցով գտնվել է Ռումինիայի Վրանչա նահանգի Ֆոկշան քաղաքում, ուր, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ստորագրվել է համատեղ հռչակագիր՝ Ֆոկշան և Բերդ քաղաքների միջև համագործակցության կապեր հաստատելու վերաբերյալ: Հռչակագիրը ստորագրել են Ֆոկշանի քաղաքապետ Դեչեբալ Բաչինսկին և Բերդի քաղաքապետ Անդրանիկ Շառյանը:

Համատեղ համաձայնությամբ նշմարվել են տարբեր ոլորտներում համատեղ ծրագրերի նախաձեռնության հնարավորությունը՝ մշակույթ, գիտություն, արվեստ, սպորտ, զբոսաշրջություն, համատեղ ծրագրեր երիտասարդների համար և այլն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 16-րդ հոդվածի 22-րդ կետով

համայնքի ավագանին որոշում է

Վավերացնել 2012 թվականի հոկտեմբերի 25-ին Ռումինիայի Ֆոկշան քաղաքում կնքված հռչակագիրը՝ Ֆոկշան և Բերդ քաղաքների միջև համագործակցության կապեր հաստատելու վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@majl.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 18-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով

համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի բյուջեի ընթացքի մասին՝ համաձայն 1 և 2 հավելվածների:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1

Բերդի համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 20-ի N 18 -Ա որոշման

Բերդի համայնքի բյուջեի 2012 թվականի երրորդ եռամսյակի եկամուտների կատարման մասին

/հազար դրամ/

Հ/հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ	Տարեկան պլան	2012թ. երրորդ եռամսյակ		
	ՄԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		Պլան	Փաստացի	Կատարման %
1	ՀՈՂԻ ՀԱՐԿ	5700.00	4275.0	3670.1	85.9
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	13100.00	9750.0	7103.2	72.9
3	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3500.00	2625.0	2127.3	81.0
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	4500.00	3375.0	3229.1	95.7
5	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	13871.40	10430.0	6338.9	60.8
6	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ	3000.00	2250.0	1682.8	74.8
7	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	550.00	412.0	0.0	0.0
8	ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	11000.00	8300.0	1742.3	21.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	55221.40	41417.00	25893.70	62.52
	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ				
9	ԴՈՏԱՑԻԱ	102222.80	76667.1	76667.1	100.0
10	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2525.23	1767.70	1767.7	100.0
11	ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ	2252.20	1621.6	1621.6	100.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	107000.23	80056.40	80056.40	100.00
12	ՏԱՐԵԿԱՁԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ	5231.80			
13	ՎԱՐՁԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ				
14	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	5231.80			
	Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը	167453.43	121473.40	105950.10	87.22

Քաղաքապետ Հ. Մանուչարյան

Հավելված 2
Բերդի համայնքի ավագանու
2012թվականի նոյեմբերի 20-ի N 18 -Ա որոշման

2012թ. երրորդ եռամսյակում համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

/հազար դրամ/

Հ/հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	Տարեկան ծախսերի նախահաշիվ	2012թ. երրորդ եռամսյակ		
			Նախատեսված ծախս	Փաստացի կատարվել է	Կատարման %
1	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ	44139.8	36158.5	30613.4	84.7
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	30259.2	22694.4	20172.8	88.9
3	ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ	23225.4	17349.7	15943.2	91.9
4	ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, Արվեստի դպրոց	13826.6	10971.4	10089.8	92.0
5	ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	27000.0	20250.0	18775.0	92.7
6	ՍՈՑ ԾԱԽՍԵՐ	4000.0	3000.0	2135.0	71.2
7	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	9231.8	7200	907.4	12.6
8	Վարչական բյուջեի ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ մաս	2545.4	1908		0.0
9	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2525.23	1767.7	1680.1	95.0
10	ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5500.0	5480.0	3756.4	68.5
11	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	5200.0	5150.0	5030.0	97.7
	ԸՆԴԱՄԵՆԸ	167453.43	131929.70	109103.10	82.7

Քաղաքապետ Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@majl.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 19-Ա

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Իրավական ակտերի մասին,, օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով, ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N165-Ն հրամանով և հաշվի առնելով Բերդի քաղաքապետի առաջարկությունն այն մասին, որ քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը ուռճացված է և անհրաժեշտ է կրճատել հաստիքների թիվը, որը հնարավորություն կտա ապահովել աշխատակազմի աշխատողների և համայնքային ծառայողների լրիվ զբաղվածությունն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ազատված ֆինանսական միջոցներն ուղղել համայնքի սոցիալտնտեսական խնդիրների լուծմանը

Համայնքի ավագանին որոշում է

1.Քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքում և համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքում նախատեսել նոր՝ ,,Ներքին աուդիտի բաժին,, կառուցվածքային ստորաբաժանումը և հաստատել քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N1 հավելվածի.

2)քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում նախատեսել նոր հաստիք՝ ներքին աուդիտի բաժնի պետ.

3)համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 2-րդ ենթախմբից հանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի

ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետի պաշտոնը, ծածկագիրը՝ 3.2-8.

4) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 1-ին ենթախմբից հանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնը, ծածկագիրը՝ 3.1-4.

5) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 1-ին ենթախմբից հանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնը, ծածկագիրը՝ 3.1-5.

6) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 1-ին ենթախմբից հանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնը, ծածկագիրը՝ 3.1-8.

7) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 2-րդ ենթախմբից հանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի պաշտոնը, ծածկագիրը՝ 3.2-2:

2.Հաստատել Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1

Բերդի քաղաքային
համայնքի ավագանու 2012 թվականի
նոյեմբերի 20-ի N 19-Ա- որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

կառուցվածքային ստորաբաժանումներ

1.Ֆինանսատնտեսագիտական բաժին

2.Ներքին աուդիտի բաժին

առանձնացված ստորաբաժանումներ

3.Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժին

Բերդ համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 2
Բերդի համայնքի ավագանու
2012 թվականի նոյեմբերի 20-ի N 19 -Ա որոշման

ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 28

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը/ՀՀդրամ/
	Համայնքի ղեկավար	1	210000
	Հայեցողական պաշտոններ		
	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	95000
	Համայնքի ղեկավարի օգնական	1	70000
	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	60000
	Համայնքային ծառայողներ		
	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	93000
	Ֆինանսատնտեսագիտական բաժին		
	Բաժնի պետ 2.1-2	1	85000
	Առաջատար մասնագետ 3.1-1	1	50000
	Առաջին կարգի մասնագետ 3.2-9	1	
	Առաջին կարգի մասնագետ 3.2-1	1	
	Առաջին կարգի մասնագետ 3.2-7	1	
	Ներքին աուդիտի բաժին		
	Բաժնի պետ	1	
	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Բերդի տարածքային բաժին		
	Բաժնի պետ 1.3-1	1	110000
	Առաջին կարգի մասնագետ 3.2-10	1	38600
	Աշխատակազմ		
	Գլխավոր մասնագետ 2.3-2	1	80000
	Գլխավոր մասնագետ 2.3-3	1	80000
	Գլխավոր մասնագետ 2.3-4	1	80000
	Առաջատար մասնագետ 3.1-7	1	50000
	Առաջատար մասնագետ 3.1-6	1	50000
	Առաջատար մասնագետ 3.1-3	1	50000
	Առաջին կարգի մասնագետ 3.2-3	1	45000
	Քաղաքացիական աշխատանք իրականացնողներ		
	Քաղաքացիական պաշտպանության շտաբի տնտուչ	1	45000
	Լրագրող	1	45000
	Տեխսպասարկման անձնակազմ		
	Վարորդ	1	60000
	Հավաքարար	2	32500
	Պահակ	3	32500

Բերդ համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 20-Ա

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 4-ՐԴ, 5-ՐԴ, 6-ՐԴ, 7-ՐԴ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետ Հ. Մանուչարյանն առաջարկեց լրացուցիչ ուսումնասիրություն կատարելու նպատակով օրակարգի 5-րդ, 6-րդ, 7-րդ հարցերը, իսկ զեկուցողի բացակայության պատճառով 4-րդ հարցը՝ տեղափոխել հաջորդ նիստի քննարկմանը:

Ղեկավարվելով համայնքի ավագանու կանոնակարգի 2-րդ մասի 5-րդ կետի 2-րդ ենթակետով

Համայնքի ավագանին որոշում է

Օրակարգում ընդգրկված 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ հարցերը տեղափոխել հաջորդ նիստի քննարկմանը:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 21-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 2 ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀՆԵՐԸ ԵՎ 2 ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով, և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի գ) ենթակետով և 34-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է

1.Մաշտոցի 82/25 հասցեում գտնվող 24.09 քմ մակերեսով առևտրի սրահը 238491 դրամով և նրա զբաղեցրած 24.09 քմ մակերեսով հողամասը 19512 դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել Սեյրան Արշալույսի Գալստյանին:

2.Մաշտոցի 82/2 հասցեում գտնվող 23.9 քմ մակերեսով առևտրի սրահը 236610 դրամով և նրա զբաղեցրած 23.9 քմ մակերեսով հողամասը 19359 դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել Վիկտոր Վանիկի Դանիելյանին:

3.Խորենացի 28/2 հասցեում գտնվող 27.8 քմ մակերեսով ավտոտնակը 30580 դրամով և նրա զբաղեցրած 27.8 քմ մակերեսով հողամասը 22518 դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել Գալուստ Մաքսիմի Մելքումյանին:

4.Խորենացի 28/3 հասցեում գտնվող 30 քմ մակերեսով ավտոտնակը 33000 դրամով և նրա զբաղեցրած 30 քմ մակերեսով հողամասը 24300 դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել Գալուստ Մաքսիմի Մելքումյանին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, p. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 22-Ա

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30 ՀՈՒՆՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ N 5-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետ Հ. Մանուչարյանը նշեց, որ Բերդ համայնքի ավագանու ,,Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողամասերից /հասարակական կառուցապատման հողեր/ կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին,, 2012 թվականի հունվարի 30-ի N 5-Ա որոշումով Բերդ քաղաքի Մաշտոցի փողոցի 26 շենքի հարակից տարածքում գտնվող զբոսայգու հարևանությամբ 520 քմ մակերեսով և Մաշտոցի 50-Ա, 50-Բ, 50-Գ հասցեներում 60 քմ մակերեսով հողամասեր, Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողամասերից, տրամադրվել են կառուցապատման իրավունքով և 16 բնակիչներ օրենքով սահմանված կարգով ձեռք են բերել կառուցապատման իրավունքի պայմանագրեր: Սակայն առ այսօր կառուցապատում չի կատարվել, քանի որ շինթույլտվություններ չեն տրամադրվել: Նշելով, որ Մաշտոցի 26 հասցեում կառուցապատման համար հողամասերի տրամադրումը չի բխում համայնքի բնակչության շահերից, այդ մասին կան նաև բնակչության գրավոր և բանավոր արձագանքները, քաղաքապետն առաջարկեց՝ Մաշտոցի 26 շենքի հարևանությամբ գտնվող զբոսայգին ընդլայնել, կառուցել հանգստյան գոտի և մանկական խաղահրապարակ՝ բնակչության և երեխաների ակտիվ հանգիստը կազմակերպելու համար:

Համայնքի ավագանին գտնում է, որ չնայած համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայով Մաշտոցի փողոցի 26 շենքի հարակից տարածքի զբոսայգու

հարևանությամբ գտնվող 520քմ մակերեսով հողամասը կառուցապատման տարածք է, սակայն նպատակահարմար է գտնում ընդառաջ գնալ բնակիչների ցանկությանը՝ ընդլայնել փաստացի գործող մանկական զբոսայգին և ստեղծել պայմաններ երեխաների և բնակիչների հանգստի կազմակերպման համար:

Համայնքի ավագանին միաժամանակ գտնում է, որ Մաշտոցի 50-Ա, 50-Բ, 50-Գ հասցեներում գտնվող հողամասերը ընդհանուր օգտագործման տարածքներ են /բնակավայրում ընդհանուր օգտագործման ճանապարհ/ և այդ տարածքների տրամադրումը հակասում է ՀՀ հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներին:

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով

Համայնքի ավագանին որոշում է

1.Ոչ ժը կորցրած ճանաչել ,,Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողամասերից /հասարակական կառուցապատման հողեր/ կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին,, Բերդի համայնքի ավագանու 30 հունվարի 2012 թվականի N 5-Ա որոշման 1-ին կետի 1-ից 26 ենթակետերը և 31-ից 33 ենթակետերը:

2.Հանձնարարել աշխատակազմի գլխավոր մասնագետ Դ. Մելիքյանին ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ, համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան, Մաշտոցի 26 շենքի հարևանությամբ առևտուր իրականացնող անհատ ձեռներեցներին ազատ տարածքներով ապահովելու համար:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան